

ՀՀ գյուղնախարարի այցը՝ Վայոց ձորի մարզ

08.10.2012

Այսօր աշխատանքային այցով Վայոց ձորի մարզում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, որին ընդունել է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը: Մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ խորհրդակցություն նվիրված մարզում աճեցված խաղողի բերքի մթերման ընթացքին: Խորհրդակցությանը մասնակցում էին հանրապետության և մարզի խաղող մթերող ձեռնարկությունների տնօրեններ ու խաղող արտադրող համայնքների ղեկավարներ: Քննարկումից հետո պայմանավորվածություն ձեռք բերվեց մթերողների հետ, որպեսզի խաղողի աճեցված բերքը մթերվի ամբողջությամբ: